

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԿԱՐԱ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՌՈՍՄԱՆԻ**

**ԻՆՈՎԱՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ԵՐԵՎԱՆ - 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Բոստանջյան Վարդան Բաբկենի

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Դանթարջյան Սարգիս Լևոնի

տնտեսագիտության թեկնածու  
Հախվերոյան Դավիթ Ներսիկի

**Առաջատար կազմակերպություն՝**

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ.-ի հուլիսի 16-ին, ժամը 15<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ.-ի հունիսի 14-ին:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա.Հ.Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Տնտեսավարման արդի պայմաններում, երբ շուկաների ինտենսիվ միջազգայնացումը էապես սրել է մրցակցությունն ու մեծացրել սպառողների բժախնդրությունը, ինովացիաները դարձել են տնտեսության զարգացման որոշիչ գործոն: Դրանք ամեն մի համակարգի ճկունության, հետևաբար և կենսունակության գրավականն են:

Ինովացիոն գործընթացը իր բնույթով եզակի գործընթաց է, որը իրար հետ կապում է գիտությունը, տեխնիկան, տնտեսությունը, ձեռնարկատիրությունը և կառավարումը: Նրանում ամբողջացվում են այն գիտելիքները, որոնք իրազեկ ղեկավարը, արդյունավետ աշխատող գիտնականը, ճարտարագետը, պաշտոնյան և պարզապես հասարակության կրթված անդամը պետք է ունենան վաղվա օրվա համար:

Անցումային և հետանցումային փուլում գտնվող տնտեսությունների զարգացման հեռանկարներն ուսումնասիրող տնտեսագետների մեծամասնությունը կարծում է, որ առանց ազգային տնտեսության ինովացիոն ակտիվության բարձրացման, նշված երկրները չեն կարող ունենալ երկարատև և կայուն տնտեսական աճ: Ասվածն առավել քան բնութագրական է Հայաստանի Հանրապետությանը, քանի որ անցումային և հետանցումային փուլում գտնվող երկրների խմբում այն առանձնանում է իր՝ բնական ռեսուրսներով թույլ ապահովվածությամբ ու տարածաշրջանային անբարենպաստ դիրքով: Ուստի, տնտեսության երկարաժամկետ զարգացման տեսանկյունից, հանրապետության համար կարևորագույն խնդիր է դառնում ազգային ինովացիոն համակարգի արդյունավետ մոդելի մշակումն ու գործարկումը:

2006թ. սահմանվեցին Հայաստանում ինովացիոն գործունեության աջակցման իրավական հիմքերը «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարական մի շարք որոշումներով: Մշակվել և հաստատվել է էլեկտրոնային հասարակության հայեցակարգը:

Հայաստանում արդեն իսկ ստեղծվել և գործում են մի շարք մասնավոր և պետական բիզնես և կրթական կառույցներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցում են ինովացիոն գործունեությանը և ինովացիոն ընկերություններին (Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Գյումրի ՏՏ կենտրոն, Վիասֆեր Տեխնոպարկ, հետազոտական համալսարաններ և այլն): Ընթացքում են նաև մի շարք հանրակրթական ծրագրեր, որոնք իրականացվում են համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ընկերությունների կողմից, ինչպիսիք են Մայրքրոստֆթը, ԷյչՓի-ն և Ինթելը-ը<sup>1</sup>:

Ինովացիաները կարևոր դերակատարություն են ունեցել հասարակության զարգացման ողջ ընթացքում, ուստի, պատահական չէ, որ տարբեր ժամանակաշրջանների գիտնականներն ու հետազոտողները մշտապես անդրադարձել են դրանց: Ազգային տնտեսության գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում առկա հիմնախնդիրների ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն հայազգի տնտեսագետ-գիտնականները: Ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանի կողմից ուսումնասիրվել է գիտատեխնիկական ներուժի կադրային բաղադրիչի վերարտադրության հիմնահարցերը, ազգային տնտեսության ինովացիոն միջավայրի և պետության անուղղակի կարգավորման խնդիրներին է անդրադարձել Գ.Խանիկյանը, մտավոր սե-

<sup>1</sup> Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ: Հաստատված է ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ:

փականության օբյեկտների պահպանության և գնահատման հիմնախնդիրներն ուսումնասիրել է Ս.Ղանթարջյանը, իսկ գիտության ու արտադրության ինտեգրման, ինչպես նաև տեխնոլոգիաների միջազգային փոխանակման հնարավորություններն ու հեռանկարները քննարկել են Մ.Քոթանյանը, Ա.Մարկոսյանը, Ա.Առաքելյանը, Բ.Եղիազարյանը, Հ.Սարգսյանը, Ծ.Կարապետյանը, Ա.Մարգարյանը և այլոք: Ինովացիաների և ինովացիոն գործունեության հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությամբ ակտիվորեն զբաղվել են նաև արտասահմանյան հետազոտողներ Ռ.Ակոֆը, Վ.Բերենսը, Պ.Դրակերը, Դ.Կլարկը, Գ.Մենչը, Ռ.Ժորտերը, Ռ.Նոստերը, Բ.Խանտոն, Բ.Տվիսը, Ֆ.Նջբստը, Ա.Աբալկինը, Ա.Անչիշկինը, Լ.Բյախմանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի է մոտեցել ինովացիաների և ինովացիոն գործունեության էության բացահայտմանը՝ կատարելով որոշակի շեշտադրումներ:

Սակայն այսօր Հայաստանում խնդիր կա սահմանելու ինովացիոն տնտեսության ձևավորման միասնական տեսլական և մշակելու համապարփակ ռազմավարություն, որը կինտեգրի գործող և մեկնարկվող նախաձեռնությունները մեկ միասնական համատեքստում: Դա կնպաստի կատարվող քայլերի առավել նպատակաուղղված դարձնելուն և արդյունավետ կիրարկմանը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մեխանիզմները և մատնանշել դրանց առավել արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տնտեսական քաղաքականության ուղղությունները հանրապետության տնտեսության համար: Այդ նպատակներին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հետազոտել ինովացիաների և ինովացիոն համակարգի տեսագործնական հիմքերը և ինովացիոն համակարգերի զարգացման արտերկրյա փորձի հիման վրա գնահատել ազգային ինովացիոն համակարգերը ձեռնարկատիրական միջավայրում,
- գնահատել Հայաստանի Հանրապետության ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախադրյալները և ինովացիոն ներուժը, առավելապես շեշտադրելով այդ համակարգի գիտական և կրթական բաղադրիչները,
- ուսումնասիրել ՀՀ տնտեսության ինովացիոն մրցունակության առկա վիճակը և ազգային ինովացիոն քաղաքականության ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում,
- բացահայտել ինովացիոն տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները ՀՀ-ում և ներկայացնել առարկայական մեխանիզմներ դրանց հաղթահարման ուղղությամբ,
- գնահատել ինովացիոն տնտեսության զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները, մշակել Հայաստանի ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախընտրելի մոդել:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության օբյեկտը Հայաստանի ազգային տնտեսությունն է և, մասնավորապես, ՀՀ տնտեսության ինովացիոն բաղադրիչը: Հետազոտության առարկան ազգային ինովացիոն համակարգն է, ինչպես նաև՝ նրա ձևավորման հիմնախնդիրները:

**Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանյան տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, տնտեսագիտական դասական և արդի տեսությունների հիմնադրույթները, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և

գիտության նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, Համաշխարհային բանկի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ԱՊՀ երկրների վիճակագրական կոմիտեի ցուցանիշները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ՀՀ գիտական և կրթական բաղադրիչների ուսումնասիրության հիման վրա գնահատվել են ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախադրյալները և ինովացիոն ներուժը, որը հնարավորություն է տվել նախանշել Հայաստանում գիտելիքահենք տնտեսության կառուցմանն ուղղված հիմնական ռեսուրսները,
- ՀՀ տնտեսության ինովացիոն մրցունակության առկա վիճակի և դրա հնարավոր փոփոխության դինամիկայի գնահատման հիման վրա բացահայտվել են ազգային ինովացիոն քաղաքականության ինստիտուցիոնալ և օրենսդրական կատարելագործման հիմնական ուղղությունները,
- բացահայտվել են ինովացիոն տնտեսության զարգացման խոչընդոտները ՀՀ-ում և ներկայացվել են արդյունավետ մեխանիզմներ այդ խոչընդոտները հաղթահարելու ուղղությամբ,
- գնահատվել են ինովացիոն տնտեսության զարգացման առաջնահերթությունները և մշակվել է Հայաստանի ազգային ինովացիոն համակարգի մոդելը:

**Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:** Ատենախոսությունում ներկայացված՝ ազգային ինովացիոն համակարգի կառուցմանն ուղղված մոտեցումները կարող են օգտակար լինել տնտեսական քաղաքականության մշակման համար:

Հետազոտության արդյունքները կարող են նպաստել Հայաստանում առևտրային կազմակերպությունների ինովացիոն գործունեության իրականացման շրջանակներում պետական կարգավորման արդյունավետության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև առևտրային կազմակերպություններին՝ ինովացիաների ներդրման և օգտագործման հիմնախնդիրների լուծման ժամանակ:

Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են օգտակար լինել նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պետական կառավարման մարմինների պատասխանատու, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը:** Հետազոտության հիմնական արդյունքները ամփոփվել են ատենախոսության ուսումնասիրության շրջանակներում հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում: Հետազոտության արդյունքները քննարկվել են «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 160 մեքենագիր էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել է թեմայի մշակվածության աստիճանը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել՝ օբյեկտը և առարկան, ձևակերպվել՝ գիտական արդյունքներն ու նորույթը, ինչպես նաև ուղենշվել են տեսական և գործնական կիրառման հնարավորությունները, ներկայացվել են աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված խնդիրների հաջորդականությամբ:

*Ատենախոսության առաջին՝* «Ինովացիաների և ինովացիոն համակարգի տեսագործնական հիմքերը», *գլխում* վերլուծվել են ինովացիաների և ինովացիոն գործունեության հիմնական հասկացությունները և բնութագրերը, ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը և զարգացումը ձեռնարկատիրական միջավայրում, հետազոտվել է ինովացիոն համակարգերի զարգացման արտերկրյա փորձը, ինչպես նաև գիտական հետազոտությունների առևտրայնացման գործում պետական աջակցության համաշխարհային փորձը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազգային տնտեսության մեջ իրականացվող ինովացիաների որակական և քանակական բնութագրիչները պայմանավորված են տվյալ հասարակության ինովացիոն ներուժով: Վերջինս, որպես ինովացիոն գործընթացների ելակետային պայման, ներկայացվում է ինովացիոն գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարբեր տեսակի, այդ թվում՝ կադրային, ֆինանսական, նյութական, տեղեկատվական, գիտատեխնիկական և այլ ռեսուրսների ամբողջության տեսքով<sup>2</sup>: Ինովացիոն ներուժը ներկայացվում է նաև որպես տնտեսավարող հասարակության (ազգի) կարևորագույն ռեսուրսային ձեռքբերում, որը նրան հսկայական մրցակցային առավելություններ է տալիս այլ հասարակությունների հետ տնտեսական մրցակցության պայքարում<sup>3</sup>:

Ներկայումս զարգացած շատ երկրներ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ ապահովելու իրենց մակրոտնտեսական ռազմավարությունները կապում են գործուն ազգային ինովացիոն համակարգերի (ԱԻՀ) ձևավորման և տնտեսության զարգացման ինովացիոն ուղուն անցման հետ: Վերջինս բնութագրվում է ազգային տնտեսությունում գիտության և տեխնիկայի առաջավոր ձեռքբերումների առավել լայն օգտագործմամբ (տեղեկատվական ժամանակակից համակարգեր, կենսատեխնոլոգիաներ, նոր նյութեր, բնապահպանական և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաներ և այլն):

Չարգացման ներկա փուլի հիմնական նվաճումը ինովացիոն համակարգի ձևավորումն է, որն իր կառուցվածքի ու ազդակների միջոցով հնարավորություն է տալիս անհրաժեշտ պահին ասպարեզ բերել այս կամ այլ տեխնոլոգիական նվաճումը<sup>4</sup>:

Ազգային ինովացիոն համակարգերը, որպես կանոն, ենթադրում են փոխկապակցված հետևյալ տարրերը.

– կրթության և վերապատրաստման համակարգում գիտելիք արտադրող

<sup>2</sup> Янковский К.П., Введение в инновационное предпринимательство, -СПБ.:Питер, 2004, с.127.

<sup>3</sup> Осипов Ю.М., Теория хозяйства. Учебник в трех томах. Т.2, -М.:1997, с. 232.

<sup>4</sup> Дынкин А., Экономика знаний в России и в мире, <http://fp6.csr.ru/news/data/dynkin.doc>

- կազմակերպություններ,
- գիտահետազոտական հաստատություններ,
- համապատասխան մակրոտնտեսական և կարգավորման շրջանակը՝ ներառյալ տեխնոլոգիայի տարածման վրա ազդող առևտրի քաղաքականությունները,
- ինովացիոն ֆիրմաներ և ընկերությունների ցանցեր,
- համակարգի գործունեությունն ապահովող հաղորդակցային ենթակառուցվածքներ,
- ինովացիային նպաստող այլ պայմաններ:

Ներկայումս ողջ աշխարհում գործում են ԱԻՀ-երի տարբեր մոդելներ, որոնք հիմնականում հանդես են գալիս հետևյալ դրսևորումներով.

- եվրոպական-ամերիկյան մոդել, որը հիմնված է առավելապես սեփական երկրի գիտատեխնիկական ներուժի զարգացման և օգտագործման ռազմավարության վրա,
- ճապոնական մոդել, որը հիմնված է արտասահմանյան գիտատեխնիկական ներուժի օգտագործման և ներմուծվող գիտատեխնիկական մշակումների հետագա լրամշակման ռազմավարության վրա,
- Հարավ-Արևելյան Ասիայի նոր ինդուստրիալ երկրներում կիրառվող մոդել, որի հիմնական հատկանիշներն են. նպաստավոր ներդրումային միջավայր, տեխնիկական բարձր հագեցվածությամբ ապրանքներ արդադրող և արտահանմանը կողմնորշված տնտեսության ճյուղերին սպասարկող գիտական և գիտատեխնիկական ոլորտների զարգացման բարձր տեմպեր:

Ազգային ինովացիոն համակարգերի նշված մոդելները ստեղծվում և գործարկվում են միմյանցից էականորեն տարբերվող ռազմավարությունների հիման վրա: Դրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես երկրի գիտատեխնիկական ներուժի, ինովացիոն ենթակառուցվածքների, փոքր ու միջին ինովացիոն ընկերությունների, ինչպես նաև ֆինանսավորման վեճիչության ինովացիոն համակարգերի ամբողջություն:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն համակարգի գլխավոր առանձնահատկությունը դրանում ընդգրկված հետազոտական կազմակերպությունների, համալսարանների ու ընկերությունների և արդյունաբերական ճյուղերի անկախությունն է: Ավելին՝ քաղաքականություն մշակելու համակարգված մոտեցման հիմքում այն գաղափարն է, որ ինովացիոն գործընթացի տարբեր փուլերը՝ հիմնարար հետազոտություններից մինչև առևտրայնացումը, հաճախ որոշ չափով համընկնում են և պահանջվում են համապատասխան ֆինանսավորում ու ծառայությունների տրամադրում:

Ինովացիաներին աջակցության համար ինստիտուցիոնալ և քաղաքական մեխանիզմների ձևավորման համաշխարհային փորձը վկայում է, որ առանձին երկրների մոտեցումները, ընդհանուր գծերով հանդերձ, նպատակաուղղված են առանձնահատուկ ազգային պահանջումների բավարարմանը: Այսպես, Ֆինլանդիայում դրանք ուղղված են տնտեսության դիվերսիֆիկացմանը, Ֆրանսիայում մանր տեխնոլոգիական ֆիրմաների ցանցի ստեղծմանը, ԱՄՆ-ում՝ տեղական տնտեսության վերակառուցման աջակցությանը: Այդ պատճառով էլ դրանք տարբերվում են իրենց ուղղվածությամբ և տվյալ ոլորտում պետության ունեցած դերով:

Արդյունավետ ինովացիոն համակարգերը, ըստ էության, նախատեսված են նոր գիտելիքները և ինովացիաները արտադրական հզորության վերածելու համար: Տնտե-

սական զարգացումը ենթադրում է ժամանակակից տեխնոլոգիաներ ձեռքբերելու, փորձարկելու, տարածելու և կիրառելու՝ պետության ընդունակությունը: Այս գործընթացներն առավել հաջող յուրացրել են Կորեան, Սինգապուրը, Թայվանը և Մեքսիկան:

Հետսոցիալիստական երկրների մեծ մասում, որոնցում ստեղծվեցին լայնածակատ փոփոխություններ, տվյալ պահին առկա էր բավականին զարգացած, բայց, միևնույն ժամանակ, յուրօրինակ ազգային ինովացիոն համակարգեր: դրանց առավել ընդհանուր կողմը հետազոտությունների և մշակումների պետական ֆինանսավորման կտրուկ կրճատումն էր, որը կապված էր ինչպես երկրի քաղաքական կարգի փոփոխության, այնպես էլ շուկային անցումը ուղեկցող ճգնաժամային երևույթների հետ: Այս միտումները դրսևորվեցին ոչ միայն Հայաստանում, այլև անցումային տիպի բոլոր երկրներում:

Մասնավորապես, Հայաստանում ֆինանսավորումը կրճատվեց շուրջ 8 անգամ, որի հիմնական պատճառներից մեկն էլ ինովացիոն համակարգի ներսում ֆորմալ և ոչ ֆորմալ կապերի խզումն էր: Հատկանշական է, որ կապերի խզման հետևանքները ավելի շատ կախված էին փյուզումից առաջ նրա կազմակերպական կառուցվածքից, քան գիտական ներուժի մասշտաբից: Հայաստանի գիտական ներուժը գործում էր նախկին միութենական հանրապետությունների ինստիտուտների հետ սերտ կապերի պայմաններում: Այդ իսկ պատճառով անցման գործընթացը և՛ Հայաստանի, և՛ մյուս հանրապետությունների համար դարձավ առավել ցավազին:

Այդուհանդերձ, Հայաստանում կա որոշակի ներուժ և Կառավարության պատրաստակամությունը՝ այդ համակարգը վերականգնելու համար:

***Ատենախոսության երկրորդ գլխում՝*** «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախադրյալներն ու պետական աջակցության հիմքերը», հետազոտվել են ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախադրյալները ՀՀ-ում, ամփոփ ձևով գնահատվել է Հայաստանի Հանրապետության ինովացիոն ներուժը, այդ թվում՝ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման գիտական և կրթական հիմքերը, վերլուծվել են ՀՀ տնտեսության ինովացիոն մրցունակության և ազգային ինովացիոն քաղաքականության ինստիտուցիոնալ ու օրենսդրական հիմնախնդիրները:

Կենտրոնացված կառավարման համակարգի փյուզումից հետո Հայաստանի և հետխորհրդային մի շարք երկրների գիտահետազոտական ինստիտուտների և կազմակերպությունների արտադրատեխնոլոգիական շղթայի խզումը դարձրեց նրանց աշխատանքը ոչ նպատակային, պայմանավորված իրականացված մշակումների նկատմամբ պահանջարկի բացակայությամբ: Այնուամենայնիվ, անկախության ձեռք բերման առաջին տասնամյակում հետխորհրդային և ոչ մի հանրապետությունում չի նկատվել պետական լուրջ միջամտություն՝ հարմարեցնելու սեփական գիտատեխնիկական ներուժը տնտեսական զարգացման համար անհրաժեշտ խնդիրների լուծման նպատակով: Այդ երկրներում գործնականում բացակայում էր երկարաժամկետ հեռանկարում հաշվարկված գիտատեխնիկական և ինովացիոն քաղաքականությունը:

ԱՊՀ երկրներում առաջ եկած ֆինանսական ճգնաժամը և տնտեսական աճի տեմպերի նվազումը իր հետ բերեց պետության կողմից ԳՀՓԿԱ-ի վրա կատարվող ծախսերի նվազում: Հարկ է նշել, որ վերջին տասը տարիներին զարգացած երկրներում պետության կողմից գիտության վրա կատարված ծախսերը ՀՆԱ-ում կազմել



են 2.5-3%: Գիտական ոլորտի զարգացման համար այդ երկրները կամ ավելացնում են գիտությանը տրամադրվող տարեկան հատկացումները կամ գոնե պահպանում են 2.5-3% մակարդակը: Հակառակ պատկերն է հետխորհրդային երկրներում: Շուկայական բարեփոխումների տարիներին այդ ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է մինչև 0.3% և համեմատելի է միայն աշխարհում երրորդ կարգի պետությունների հետ:

ՀՆԱ-ում գիտությանը տրամադրվող հատկացումների փոփոխության դինամիկան ԱՊՀ երկրների համար 1990-2011թթ. ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

**ԱՊՀ երկրներում ՀՆԱ-ում գիտության վրա կատարված ծախսերի փոփոխման դինամիկան 1990- 2011թթ. (%)<sup>5</sup>**

Երկիր	1990	1995	2001	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան	2.5	0.1	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.2	0.3
Ադրբեջան	1	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.2	0.2
Բելառուս	2.3	1	0.8	0.6	0.6	0.7	0.7	1.0	0.7	0.6	0.8	0.9
Վրաստան	1.2	0.1	0.2	0.1	0.2	0.2	-	-	-	-	-	-
Ղազախստան	0.7	0.3	0.3	0.3	0.2	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
Դրոկատան	0.7	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3
Մոլդովա	1.6	0.8	0.5	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.5	0.5	0.5	0.5
Լուսաստան	3	0.8	1.1	1.3	1.2	1.1	1.1	1.1	1.0	1.3	1.2	-
Տաջիկստան	0.7	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	-	-
Ուկրաինա	2.3	1.3	1.1	1.1	1.1	1.2	0.9	0.9	0.8	0.9	0.9	0.8

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 1990թ. Հայաստանը հետխորհրդային երկրներում գիտությանը տրամադրված միջոցների չափով եղել է երկրորդը Ռուսաստանից հետո: Սա վկայում է Հայաստանում երբեմնի խոշոր գիտական ներուժ ունենալու մասին: Սակայն հաջորդող տարիների ընթացքում կտրուկ նվազել է ՀՀ-ում գիտության տրամադրվող միջոցների չափը: 2011թ. Հայաստանը այդ ցուցանիշով զիջել է Բելառուսին, Ռուսաստանին, Մոլդովային և առաջ է անցել Ադրբեջանից ու Ղազախստանից:

ՀՀ-ում տնտեսական աճին զուգընթաց հաստատուն տեմպերով տարեկան միջինը 1.14 անգամ ավելացել է ՀՆԱ-ի մեջ գիտությանը տրամադրվող միջոցները նախորդ տարվա համեմատ, սակայն ամեն դեպքում, որքան անգամ, որ ավելացել է գիտությանը տրամադրվող միջոցները նախորդ տարվա համեմատ, գիտությանը տրամադրվող միջոցների մասնաբաժինը ՀՆԱ-ում գրեթե չի փոփոխվել՝ կազմելով միջինը 0.35%:

ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման 2005–2010 թվականների ծրագրի մասին» որոշման մեջ նշված էր, որ մինչև 2008թ. նախատեսվում է գիտությանը տրամադրվող միջոցների բաժինը ՀՆԱ-ում հասցնել 0.5%, իսկ 2010թ. 1%, ինչն իրականում տեղի չունեցավ:

Գիտական ոլորտի ֆինանսավորման ծավալների կրճատումը բերեց ԱՊՀ երկրներում:

<sup>5</sup> <http://www.azstat.org>, <http://www.armstat.am>, <http://www.belstat.gov.by>, <http://www.stat.kz>, <http://www.stat.kg>, <http://www.statistica.md>, <http://www.gks.ru>, <http://www.stat.tj>, <http://www.ukrstat.gov.ua>

րի և մասնավորապես Հայաստանի գիտատեխնիկական ներուժի կրճատմանը: Այն դեպքում, երբ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում հետազոտողների թիվն անընդհատ աճում է, ԱՊՀ երկրներում գիտական կադրերի քանակը շեշտակի նվազել է: 1991-1998թթ. գիտության ոլորտի կադրային ներուժը ԱՊՀ երկրներում նվազել է 2-3 անգամ: Ի դեպ, գիտության ոլորտից կադրային հոսքը ավելի արագ էր տեղի ունենում, քան տնտեսության այլ ոլորտներից (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

**ԱՊՀ երկրների գիտատեխնիկական ներուժի հիմնական ցուցանիշները<sup>6</sup>**

Երկրներ	Գիտատեխնիկական ոլորտում զբաղված աշխատակիցների քանակը, հազար մարդ			Հետազոտողների քանակը, հազար մարդ			Գիտական կազմակերպությունների քանակը		
	1991թ.	2003թ.	2011թ.	1991թ.	2003թ.	2011թ.	1991թ.	2003թ.	2011թ.
Հայաստան	-	6.8	5.7	-	6.2	4.7	-	99	72
Ադրբեջան	21.1	17.1	18.7	14.8	10.8	14.8	139	138	143
Բելառուս	78.6	29.9	31.2	51	17.7	20	308	295	501
Ծրաստան	33.1	17.8	-	23.1	11.5	-	-	120	-
Ղազախստան	37.5	16.6	18.1	22.4	9.9	11.5	276	273	412
Ղրղզստան	8	3.2	3.3	4.9	1.9	2.2	66	95	-
Մոլդովա	17.7	5	5.2	10.6	2.7	3.4	109	85	-
Ռուսաստան	1496	870.8	736,5*	878	409.8	368,9*	4564	3797	3492*
Տաջիկստան	6.2	3.3	-	3.5	1.5	-	68	58	67
Ուկրաինա	398.1	173.9	134.7	243	83.9	70.4	1344	1487	1255

\*2010 թվականի տվյալներ:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 2011թ. դրությամբ Հայաստանի գիտատեխնիկական ներուժը բավականին թույլ է եղել ԱՊՀ երկրների համեմատ և, մասնավորապես, մեր հարևան Վրաստանի և Ադրբեջանի: Աղյուսակ 2-ում նշված ցուցանիշները 2011թթ. էական վատթարացում են արձանագրել Հայաստանի համար: 2011թ. գիտական հետազոտություն իրականացնող ընկերությունների թիվը 2003թ. համեմատ նվազել է 3-ով, իսկ հետազոտողների թիվը՝ շուրջ 1500 հոգով:

ԱՊՀ երկրներում գիտական ոլորտի կադրային ներուժի կրճատումը պայմանավորված էր նաև նրա որակական բնութագրիչների կտրուկ վատացմամբ: Գիտական աշխատանքի հանդեպ վարկանիշի անկումը բերեց նրան, որ երիտասարդների հոսքը դեպի գիտություն կրճատվեց: Գիտության ոլորտում տեղի է ունենում գիտական կադրերի ծերացում: ԱՊՀ երկրներում գիտական աշխատակցի միջին տարիքը 49-ն է, գիտությունների թեկնածուինը՝ 51, գիտության դոկտորինը՝ 60:

Տվյալները վկայում են, որ Հայաստանն իր ունեցած գիտական կադրերով ԱՊՀ երկրներում առաջ է միայն Տաջիկստանից: Դա մտահոգիչ է այնքանով, որ Հայաստանը զիջում է համապատասխան ցուցանիշներով Ադրբեջանին մոտ 2 անգամ, իսկ Վրաստանին մոտ 4 անգամ: 2004-2011թթ. իրավիճակի լուրջ վատթարացում է գրանցվել, մասնավորապես գիտությունների դոկտորների թիվն նվազել է՝ հասնելով 412-ի, իսկ գիտությունների թեկնածուների թիվը՝ 1554-ի:

Հանրապետությունում գիտության ֆինանսավորման մակարդակի անկումը բե-

<sup>6</sup> Main indicators of Individual CIS Countries 2003; Hayka в России в цифрах. 2004. сmp. 193, <http://www.azstat.org>, <http://www.armstat.am>, <http://www.belstat.gov.by>, <http://www.stat.kz>, <http://www.stat.kg>, <http://www.statistica.md>, <http://www.gks.ru>, <http://www.stat.tj>, <http://www.ukrstat.gov.ua>

րեց գիտության նյութատեխնիկական և տեղեկատվական բազայի նվազեցման:

Հայաստանի գիտատեխնիկական ներուժի ցածր մակարդակը, առևտրային կազմակերպությունների ինովացիոն ակտիվության պակասը տանում է տնտեսությունը դեպի տեխնոլոգիական լճացում և գցում է տնտեսության որոշ ոլորտներ զարգացած երկրների համեմատ տասնյակ տարիներ ետ: Դրա օրինակ է միկրոէլեկտրոնիկայի ոլորտը, որը հետ է ընկած զարգացած երկրներից 15-20 տարի:

ՀՀ ինովացիոն քաղաքանությունը, որպես տնտեսական զարգացման գերակայություն, առաջին անգամ ընդունվեց 1999թ. ՀՀ կառավարության գործունեության ծրագրում:

Հայաստանում արդեն իսկ ստեղծվել և գործում են մի շարք մասնավոր և պետական կառույցներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով աջակցում են ինովացիոն գործունեությանը և ինովացիոն ընկերություններին: Նշված կառույցների շարքին են դասվում Չեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, Գյումրու SS կենտրոնը, Վիասֆեր տեխնոպարկը, գիտահետազոտական ինստիտուտները և այլն: Հարկ է նշել, որ ընթացքում են նաև մի շարք հանրակրթական ծրագրեր, որոնց իրականացմանը մասնակցում են SS ոլորտի հեղինակավոր և առաջատար հետևյալ ընկերությունները՝ Մայքրոսոֆթը, Էյջ Փի-ն և Ինթելը<sup>7</sup>:

Սակայն ներկայումս խնդիր կա, կապված ինովացիոն գործունեության ձևավորման միասնական տեսլական սահմանելու և համապարփակ ռազմավարություն մշակելու հետ, որոնք կինտեգրեն գործող և մեկնարկող նախաձեռնությունները միասնական համատեքստում, որն էլ, իր հերթին, կնպաստի կատարվող քայլերի առավել նպատակաուղղված դարձնելուն և արդյունավետ կիրառմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ինովացիոն ոլորտում նախատեսվող փոփոխությունները մեկնարկել են նախքան ԱԻՀ-ի ձևավորման 2005-2010թթ. ծրագրի ընդունումը: Սակայն ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ առաջին քայլը, թերևս, պետք է համարել «Անդրոն» տեխնոպարկի ստեղծումը, որը գործում է որպես ամերիկյան հայտնի Viasphere International ընկերության հայաստանյան մասնաճյուղ<sup>8</sup>: Նկատենք նաև, որ վերոնշյալ տեխնոպարկի զարգացման, վերազինման և ընդլայնման ուղղությամբ իրականացվող միջոցառումները արտացոլված էին ԱԻՀ-ի ձևավորման 2005-2010թթ. ծրագրում: Վերջինիս զարգացմանն ուղղված, ինչպես նաև ծրագրում նշված միջոցառումները նպատակ ունենին նպաստել գիտահետազոտական արդյունքների վրա հիմնված նոր արտադրությունների կազմակերպմանը:

Գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու առումով, չափազանց կարևոր է, որպեսզի հանրապետությունում ինովացիոն ենթակառուցվածքների առանձին կառուցվածքային միավորների ստեղծման և գործարկման ուղղությամբ իրականացվող միջոցառումներն ունենան շարունակական բնույթ: Այս իմաստով, բավական հուսադրող է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրված քաղաքականությունը, որը, բարձր գնահատելով մեր երկրում ինովացիոն ենթակառուցվածքների առանձին կառուցվածքային միավորների՝ հանրապետության տարբեր

<sup>7</sup>Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարություն, հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի N 6 արձանագրային որոշում, էջ 4:

<sup>8</sup>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության Գիտության, տեխնոլոգիաների և ինովացիոն քաղաքականության վարչության 2004թ. աշխատանքների հաշվետվություն:

տարածաշրջանի տնտեսական և տեխնոլոգիական զարգացման գործում ունեցած դերակատարությունը, որոշում ընդունվեց Գյումրի քաղաքում տեխնոպարկի ստեղծման մասին<sup>9</sup>: Տեխնոպարկում գործելու են այնպիսի մասնագիտացված կառուցվածքային միավորներ, ինչպիսիք են բիզնես-ինովացիոն և տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնները:

Հայաստանում պետք է ստեղծվեն ազգային տնտեսության ինովացիոն ոլորտը սպասարկող այնպիսի ենթակառուցվածքային միավորներ, որոնք հնարավորություն կընձեռեն էականորեն ակտիվացնել տեխնոլոգիաների առևտրայնացման գործընթացները: Այդ առումով, հատկանշական են մի շարք միջոցառումներ, որոնք արդեն իսկ ներառված էին հանրապետությունում ԱԻՀ-ի ձևավորման 2005-2010թթ. ծրագրում: Մասնավորապես՝ ինովացիոն փաթեթների մշտապես գործող ցուցահանդեսների կազմակերպումը, առաջավոր տեխնոլոգիաների գիտահիմնովացիոն, տեղեկատվական-վերլուծական կենտրոնների ստեղծումը, ինչպես նաև ինովացիոն ենթակառուցվածքների միասնական տեղեկատվական ցանցի ստեղծումը:

Ազգային ինովացիոն համակարգի ստեղծման գործում չափազանց մեծ է կրթության դերը: Սակայն հարկ է նշել, որ հանրապետությունում բուհերի ֆինանսավորումն, ըստ էության, իրականացվում է սովորողների հաշվին: Ներկայումս ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական բուհերում սովորող ուսանողների շուրջ 80%-ից ավելին կատարում է վճարումը սեփական միջոցների հաշվին, ինչը բավական բարդ խնդիր է բնակչության զգալի մասի համար, հատկապես, եթե ընտանիքում ուսանողների թիվը մեկից ավելին է:

Մասնագիտական կրթության ֆինանսավորման տարբեր աղբյուրների օպտիմալ գույակցումը կախված է բազմաթիվ գործոններից՝ տնտեսության զարգացման աստիճանից, բյուջեի եկամուտներից, գիտատեխնիկական զարգացման աստիճանից և այլն: Ուստի և տարբեր երկրներում այն լուծվում է տարբեր ձևերով: Մասնավորապես՝ գործում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացված և բազմաբնույթ համակարգ, այդ թվում տարբեր մակարդակների բյուջեների և գործատուների մասնակցությամբ, ինչպես նաև կրթական վարկավորման կիրառմամբ: Հայաստանում բարձրագույն կրթության ծախսերի ֆինանսավորման դիվերսիֆիկացված մոդելի կազմում առավել նպատակահարմար է ներգրավել ընտանիքների, ընկերությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, ինչպես նաև փոխառու միջոցներ:

Մյուս կողմից, կրթական ծառայությունների շուկան համարժեք չի արձագանքում տնտեսության իրական հատվածի պահանջներին, ինչն ունի օբյեկտիվ պատճառներ: Մասնավորապես, մասնագետների պատրաստումը պահանջում է որոշակի ժամանակահատված, ինչով և որոշվում է այն տարբերությունը, որից հետո կրթական ծառայությունների շուկան կարող է արձագանքել աշխատանքի շուկայի փոփոխություններին և հակառակը: Նման անհամամասնությունների մեղմացումը հնարավոր է աշխատանքի շուկայի պահանջների կանխատեսման միջոցով:

Բարձրագույն կրթության բուռն զարգացումը, ինչպես նաև բուհի կողմնորոշումը դեպի ոչ վերջնական սպառողը, հաճախ հանգեցնում են որոշ մասնագիտությունների և մասնագիտացումների և դրանցով ընդունելության աճին: Դա հատկապես բնորոշ է

<sup>9</sup> «Գյումրու տեխնոպարկի ստեղծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2006թ. մարտի 2-ի No2 նիստի No8 արձանագրային որոշումից քաղվածք:

ոչ պետական բուհերին, որոնք մասնագիտական կրթության ոլորտի առավել շուկայական հատվածն են և ներկայումս հիմնականում պատրաստում են մասնագետներ իրավագիտության (27,7%), տնտեսագիտության (36,5%) և մանկավարժության (12,9%) մասնագիտություններով, որոնց նկատմամբ կրթական ծառայությունների շուկայում գոյություն ունի վճարունակ պահանջարկ: Կրթության, նոր կրթական տեխնոլոգիաների մեջ կատարվող ներդրումները պետք է հաշվի առնվեն տնտեսավարող սուբյեկտների հարկման բազան որոշելիս, դա իհարկե հեշտ հարց չէ, բայց այն անհրաժեշտ է լուծել, քանի որ առանց այդպիսի ներդրումների անհնար է ապագայի, գիտելիքների տնտեսության ստեղծումը:

Այսպիսով, հետագա առաջընթացը պահանջում է, որպեսզի շտկվեն անհամա-մասնություններն աշխատանքի և կրթական ծառայությունների շուկաների միջև, ուժեղանա բուհերի, բիզնեսի և արտադրության ինտեգրումը, ինչի արդյունքում բիզնեսը կունենա էական մասնակցություն կրթության ֆինանսավորման գործում:

Ըստ 2009-2010 թվականների Ինովացիայի համաաշխարհային ցուցչի (INSEAD & CII, 2010)՝ Հայաստանն առաջադիմել է ինովացիոն ոլորտում՝ 104-րդ տեղից բարձրանալով 82-րդ տեղը: Սակայն սա հիմնականում պայմանավորված է մեթոդաբանության փոփոխությամբ և առավել թարմ տվյալների օգտագործմամբ, քան կտրուկ քայլերի իրականացմամբ կամ Հայաստանի տնտեսության մեջ դրական զարգացումներով: Հայաստանի դիրքերը համեմատաբար նպաստավոր են ինովացիայի արտադրանքի ցուցանիշների, օրինակ՝ գիտելիքի կիրառման, սոցիալական բարեկեցության օգուտների և այլնի առումով, ինչը խոսում է այն մասին, որ գիտության բնագավառում օժտված աշխատողները շարունակում են արտադրանք ապահովել ի հեճուկս արագորեն վատթարացող ներդրանքի կամ միջավայրի գործոնների: Այնուհանդերձ, Հայաստանի ինովացիային առնչվող բոլոր ցուցիչները ցածր են 100-րդ հորիզոնականից՝ ուսումնական հաստատությունների որակ, ենթակառուցվածքի յուրացում և օգտագործում, մասնավոր վարկերի հասանելի-ություն, ինովացիոն միջավայր, ինչպես նաև արտաքին և ներքին մրցակցության նկատմամբ բաց լինելը: Ներքին ինովացիան կայուն չէ և սպառնում է խոչընդոտել միջազգային մրցունակությանը: Ժառանգության և ռեսուրսների սպառումն ու քայքայումը սպառնալիք է, որն անհրաժեշտ է անհապաղ վերացնել:

Արտահանման ծավալում նախկինի նման գերիշխում են հանքահումքային արտադրանքը (2010թ. 27.3%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (2010թ. 13.5 %), ոչ թանկարժեք մետաղները և դրանցից իրերը (2010թ. 23.3%): Բարձր և միջին տեխնոլոգիական արտադրանքը 2010թ. արտահանման ծավալում կազմել է 5.8 % (օրինակ՝ սարքեր և ապարատներ, մեքենասարքավորումներ, քիմիական արտադրանք)<sup>10</sup>:

Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման այսպիսի պատկերը մատնանշում է, որ հետազոտություններն ու մշակումները Հայաստանում չեն հանգեցնում առևտրայնացված բարձր տեխնոլոգիական ապրանքների ստեղծմանը: Ավելին, ցածր է նաև բարձր տեխնոլոգիաների ներմուծումը (2002-2008թթ. միջինում ընդհանուր ներմուծման 5-8%): Դա նշանակում է, որ սահմանափակ է նաև նոր

<sup>10</sup> Աթոյան Կ., Հայաստանի Հանրապետության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները և տեսլա-կանը, «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նորաստեղծական զարգացման հեռա-նկարները», միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Տնտեսագետ», 2011

տեխնոլոգիաների ներմուծման միջոցով տեղայնացվող ինովացիան:

Համակարգիչները, էլեկտրոնիկան և հեռահաղորդակցման պարագաները կազմել են ներմուծվող բարձր տեխնոլոգիական ապրանքների 74%-ը, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումները՝ ընդամենը 2%: Ինովացիոն կատարողականի գնահատման հիմնական չափորոշիչ է արտադրողականության աճի ցուցանիշը: Թեպետ արտադրողականության վերաբերյալ ստույգ թվերն այնքան էլ հասանելի չեն, այնուամենայնիվ, վերը նշված գործոնների դիտարկումը ցույց է տալիս, որ, թերևս բացառությամբ հրապարակումների, Հայաստանը ինովացիոն արտադրանքի առումով բավականին համեստ դիրքերում է:

Հատկանշական է, որ մեկ բնակչի հաշվով ԱՄՆ-ում գրանցված արտոնագրերի առումով ԱՊՀ երկրներից շատերի համեմատությամբ Հայաստանի կատարողականն ավելի բարձր է: Այն զիջում է միայն Ռուսաստանին, Վրաստանին և Բելոռուսին: Էստոնիան՝ նախկին Խորհրդային Միության մեկ այլ զարգացող փոքր երկիր, համեմատաբար ավելի լավ դիրքերում է<sup>11</sup>:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գիտական և տեխնիկական ամսագրերում հոդվածների թողարկմամբ Հայաստանը (1 մլն. բնակչի համար՝ 60) գերազանցել է ԱՊՀ մյուս համեմատվող երկրներին՝ բացառությամբ Ռուսաստանի Դաշնության (104,6): Հրատարակումների մեծ թվի համար, բացի հեղինակությունից, որպես խթան կարող է հանդես գալ նաև այն, որ Հայաստանում հրատարակումների առկայությունը կարող է նպաստել նաև հետազոտությունների ու մշակումների պատվերների ստացմանը:

Գրեթե յուրաքանչյուր չափանիշով հետազոտությունների ու մշակումների ոլորտի և հանրային, և՛ մասնավոր ֆինանսավորումը սահմանափակ բնույթ է կրում: Այդ ուղղությամբ կատարվող համախառն ազգային ծախսերը կազմում են ՀՆԱ-ի ընդամենը 0.2%-ը, որն առավել ևս սակավ է բացարձակ ցուցանիշով՝ հաշվի առնելով Հայաստանի ՀՆԱ-ի համեստ չափը:

Բուհերի և մասնավոր հատվածի միջև հետազոտությունների բնագավառում համագործակցության ցուցանիշով Հայաստանը զբաղեցրել է 114-րդ տեղը համեմատվող երկրների մեջ առավելություն ունենալով միայն Ալբանիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Վրաստանի, Սիրիայի և Դրոգատանի նկատմամբ: Գործարար ոլորտը պատրաստ չէ կամ չի ցանկանում ներդրումներ կատարել հետազոտությունների ու մշակումների ոլորտում: Հետազոտական ինստիտուտների որակը 2009-2010թթ. Հայաստանի գործարար համայնքի կողմից գնահատվել է ցածր:

Անդրադառնալով ինովացիոն միջավայրի կարգավորման օրենսդրական դաշտին, պետք է նշել, որ ինովացիոն գործունեության աջակցմանն ուղղված ՀՀ օրենսդրական դաշտը իրավական առումով բավականին կենսունակ է, եթե վերլուծությունն իրականացվում է առանձին օրենքի շրջանակում, սակայն օրենքների համատեղման դեպքում ի հայտ են գալիս հետևյալ հիմնախնդիրները՝ օրենքի և իրականության միջև առկա անհամաձայնություն, թերի են նշված նպատակների իրականացմանը միտված գործողությունները, ինչը օրենքին կամ իրավական այլ փաստաթղթերին տալիս է դեկլարատիվ բնույթ, հստակ չեն երևում օրենսդրական քայլերի արդյունքում կազմակերպչական փոփոխությունները: Վերը նշված

<sup>11</sup> WIPO Statistics Database հուլիս 2008, արտոնագրային կազմակերպությունների պաշտոնական կայք էջեր (վերջին անգամ դիտարկվել է 2009 թվականի մայիսին)

հիմնախնդիրների պատճառը ՀՀ ինովացիոն տնտեսության ձևավորման մոդելի ոչ հստակ ներկայացումն է:

**Ատենախոսության երրորդ գլուխը՝** «Ինովացիոն միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտներն ու դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում», նվիրված է ինովացիոն տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտներին, ինովացիոն տնտեսության զարգացման հեռանկարներին ու առաջնահերթություններին, ինչպես նաև Հայաստանի ազգային ինովացիոն համակարգի կառուցման նախընտրելի մոդելի ներկայացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործարարությանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝ սեփական դրամական սուղ միջոցները, պետության կողմից ֆինանսական աջակցության մասնակիությունը, նոր արտադրանքի նկատմամբ ցածր վճարունակ պահանջարկը, բարձր տնտեսական ռիսկը, ինովացիոն ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը, օրենսդրական դաշտի ոչ կատարյալ բնույթը, որակավորված անձնակազմի անբավարարությունը և այլն:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից Հայաստանում բացակայում են այնպիսի յուրահատուկ ֆինանսական ինստիտուտներ, ինչպիսին է վենչուրային կապիտալը՝ ուղղված հիմնականում ինովացիոն և տեխնոլոգիական նախագծերի ֆինանսավորմանը: Հայաստանում ֆինանսական համակարգի խիստ վերահսկողությունը, գրավի պահանջները և ֆինանսական ռեսուրսների շատ բարձր արժեքը գործող ֆինանսական հաստատություններին հնարավորություն չեն տալիս ներգրավվել երկարաժամկետ և ռիսկային նախագծերում: Վենչուրային կապիտալի կամ նպատակային տեխնոլոգիական հիմնադրամների բացակայությունը գյուտարարի համար, որը հիմնվում է հիմնականում սեփական կամ ընտանիքի միջոցների վրա, ընկերության հիմնումն ու ընդլայնումը դարձնում է ավելի ռիսկային:

Հանրապետությունում վենչուրային կապիտալի ներդրման հետ կապված դեռ չկա հստակ կանոնակարգված քաղաքականություն և համապատասխան օրենսդրական դաշտ, որն, իր հերթին, առաջացնում է մի իրավիճակ, երբ բազմաթիվ ինովացիոն մտահղացումներ, նախագծեր, տեխնոլոգիաներ դատապարտված են «դարակների մեջ մնալու»:

ՀՀ Կառավարությունը պետք է մի շարք կոնկրետ նախաձեռնություններ իրականացնի, որոնք նպատակաուղղված կլինեն վենչուրային համակարգի կազմավորման խթանմանը:

Հայաստանում պետական ինովացիոն քաղաքականությունը պետք է մեծապես նպաստի ազգային տնտեսության տեխնոլոգիական հիմքի կատարելագործմանը, սուբյեկտների ինովացիոն ակտիվության բարձրացմանը, ինովացիոն ձեռնարկատիրության շահերի պաշտպանությանը և այլն:

Չարգացած եվրոպական երկրներում մասնավոր հատվածը լուրջ ներդրումներ ունի նաև գիտության ֆինանսավորման հարցում: Որոշ երկրներում ֆինանսավորումը կատարվում է գրեթե հավասարաչափ պետության և մասնավոր հատվածի կողմից: ՀՀ-ում գիտության վրա ծախսվող գումարների շուրջ 25%-ը կազմում են դրամաշնորհները, 75%-ը՝ պետական ֆինանսավորումը: Մասնավոր հատվածի կողմից հետազոտությունների ու մշակումների վրա կատարվող ծախսերը աննշան են, իսկ վիճակագրությունը, որպես այդպիսին, բացակայում է:

Ի տարբերություն այլ շուկայական երկրների, որոնցում որպես ներդրման

աղբյուր օգտագործվում են բանկերի փոխառու միջոցները, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամների միջոցները, Հայաստանի Հանրապետությունում հիմնական կապիտալի մեջ ներդրումների կառուցվածքում գերակշռում են ընկերությունների սեփական միջոցները:

Որպեսզի խրախուսվի նորագույն տեխնոլոգիաների զարգացումը, անհրաժեշտ է ստեղծել ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության և վարկերի պետական երաշխիքների համակարգեր: Դա հնարավոր է այն դեպքում, եթե ՀՀ կենտրոնական բանկը խթաններ ստեղծի առևտրային բանկերի համար մեծացնել իրենց ռեսուրսները և կապիտալիզացնել դրանք, փոխել վերաֆինանսավորման համակարգը:

Հաշվի առնելով Հայաստանում գործուն և մրցունակ ԱԻՀ-ի ձևավորման և գործարկման նախադրյալներն ու սահմանափակումները, հանարապետության համար առավել ընդունելի է ԱԻՀ-ի այնպիսի մոդելի կիրառությունը, որը հիմնված է սեփական երկրի գիտատեխնիկական ներուժի օգտագործման, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների և առաջատար տեխնոլոգիաների ներգրավման ռազմավարության վրա (տե՛ս գծապատկեր 1):


Նպատակահարմար է ԱԻՀ-ի ձևավորման գործընթացը բաժանել 2 հաջորդական փուլերի: Առաջին փուլում, երբ ԱԻՀ-ի հիմքը կազմող այնպիսի կառուցվածքային բաղադրիչներ, ինչպիսիք են ինովացիոն ենթակառուցվածքները, վենչուրային հիմնադրամները, գիտատեխնիկական գործունեության արդյունքների շուկան և ինովացիոն շուկան, դեռևս գտնվում են ձևավորման ու կայացման փուլում, անհրաժեշտ է վերջիններիս կողմից իրականացվող մարքեթինգային, միջնորդական, տեղեկատվական, խորհրդատվական, իրավաբանական, ապահովագրական և այլ գործառնությունները փոխանցել այդ նպատակով ստեղծվող կառավարման նոր մարմնին: Նպատակահարմար է նաև, որպեսզի այս փուլում ԱԻՀ-ի ձևավորման ուղղությամբ բոլոր միջոցառումներն իրականացվեն պետության ուղղակի ազդեցության և ակտիվ միջամտության ռազմավարության համատեքստում:

Այդ նոր մարմնի գործունեության կարևոր ուղղություններից է մեկը պետք է լինի փոքր ինովացիոն ընկերությունների ստեղծմանը նպաստող քաղաքականության իրականացումը, ինչը պետք է ուղեկցվի պետության կողմից ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրմամբ:

Նպատակահարմար է որպեսզի այս փուլում հատուկ ուշադրություն հատկացվի ԱԻՀ-ի ինովացիոն ենթակառուցվածքներին, վենչուրային հիմնադրամներին, գիտատեխնիկական գործունեության արդյունքների և ինովացիոն շուկաներին:

Երկրորդ փուլի ընթացքում ԱԻՀ-ի առանձին կառուցվածքային տարրերի ստեղծման ուղղությամբ իրականացվող պետական միջոցառումներն աստիճանաբար իրենց տեղը պետք է զիջեն այդ տարրերի ինքնակազմակերպման աջակցմանն ուղղված միջոցառումներին, իսկ պետության ուղղակի ազդեցության և ակտիվ միջամտության ռազմավարությունն աստիճանաբար պետք վերափոխվի առավելապես անուղղակի ազդեցության և ապակենտրոնացված կարգավորման ռազմավարության: Ավելին, ԱԻՀ-ի ձևավորման ավարտական փուլում որոշ գործառնություններ, որոնց իրականացումն ԱԻՀ-ի ձևավորման սկզբնական շրջանում վերապահվում էր պետությանը՝ ի դեմս կառավարման նոր մարմնի, աստիճանաբար պետք է փոխանցվեն ինովացիոն ենթակառուցվածքներին, գիտատեխնիկական գործունեության արդյունքների շուկային և ինովացիոն շուկային:





**Գծապատկեր 1. Ազգային ինովացիոն համակարգի հիմքը**

Երկրորդ փուլում հիմնական դերակատարությունը վերապահվում է ինովացիոն ենթակառուցվածքների առանձին կառուցվածքային միավորների կազմում գործող փոքր ինովացիոն ընկերություններին, որոնք գիտատեխնիկական գործունեության արդյունքների շուկայի և ինովացիոն շուկայի միջոցով ակտիվորեն համագործակցում են ինչպես գիտահետազոտական կազմակերպությունների, այնպես էլ արդյունաբերական ընկերությունների հետ: Նշենք նաև, որ ԱԻՀ-ի վերոնշյալ մոդելի պայմաններում ինչպես ինովացիոն ենթակառուցվածքների առանձին կազմակերպական միավորների կազմում գործող փոքր ինովացիոն ընկերությունները, այնպես էլ վերջիններիս գործունեության ֆինանսավորումն ապահովող վենչուրային հիմնադրամները պետք է օգտվեն պետության կողմից տրամադրվող հարկային արտոնություններից:

Տնտեսության ինովացիոն միջավայրի վերաբերյալ գիտական և մասնագիտական գրականության, համաշխարհային ինովացիոն համակարգի զարգացման արդի միտումների, ՀՀ տնտեսության մեջ այդ առումով առկա վիճակի հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ **եզրակացությունները**.

1. Ազգային տնտեսության մեջ իրականացվող ինովացիաների որակական և քանակական բնութագրիչները պայմանավորված են տվյալ հասարակության

ինովացիոն ներուժով: Վերջինս, որպես ինովացիոն գործընթացների ելակետային պայման, ներկայացվում է ինովացիոն գործունեության իրականացման համար անհրաժեշտ կադրային, ֆինանսական, նյութական, տեղեկատվական, գիտատեխնիկական և այլ ռեսուրսների ամբողջության տեսքով: Ինովացիոն ներուժը դիտարկվում է որպես հասարակության կարևորագույն ռեսուրս, որը նրան էական մրցակցային առավելություններ է տալիս այլ երկրների հետ տնտեսական մրցակցության պայքարում:

2. Ազգային ինովացիոն համակարգի կարևորագույն տարրերն են.

- կրթության և վերապատրաստման համակարգում գիտելիք արտադրող կազմակերպությունները,
- գիտահետազոտական հաստատությունները,
- ինովացիոն համակարգի արդյունավետ գործունեությանն ուղղված մակրոտնտեսական կարգավորման մեխանիզմները,
- ինովացիոն ֆիրմաները և ընկերությունների ցանցերը,
- համակարգի հաղորդակցային ենթակառուցվածքները,
- գիտելիքային հենքի զարգացմանը և ինովացիային նպաստող այլ պայմանները:

3. Ինովացիոն գործունակ և արդյունավետ համակարգը ենթադրում է նշված տարրերի շարունակական ձևավորման և անընդհատ զարգացման բարենպաստ միջավայր:

Առաջին հերթին, նկատի է առնվում հետազոտությունների, փորձարարության ու նախագծման բնագավառում մտավոր աշխատանքի վերականգնումը և առանց գիտահետազոտական ուժեղ հատվածի հնարավոր չէ պատկերացնել երկարաժամկետ ինովացիոն զարգացում, նկատի ունենալով դրա ապահովումը սեփական մտավոր ռեսուրսների արդյունավետ օգտագործման հաշվին:

Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը ինովացիաներում ներդրումներ կատարելու անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է: Շուկաներն անհրաժեշտ են զարգացման համար, նրանք ապահովում են արդյունավետ տեխնոլոգիական ընտրությունը, սակայն նրանք հանդիսանում են ինովացիաների և զարգացման միջև ադապտացիոն կապի միայն մի մասը: Ինստիտուցիոնալ գործունեության մյուս տեսակները (կրթություն, տնտեսության զարգացած հանրային հատված, հանրային բարիքների շուկա և այլն) հնարավորություն են տալիս հաշվեկշռել շուկայական մեխանիզմները:

Ինովացիաները փորձարկելու ու կիրառելու ընդունակությունը կանխորոշվում է այնպիսի ինստիտուտներով, ինչպիսիք են մշակույթը, լեզուն, վարքագծի ընդհանուր նորմերը, տեխնոլոգիական քաղաքականությունը և կրթությունը, որոնք, միասին վերցրած, կանխորոշում են ազգային բնութագիրը: Այս կախվածությունների հետևանքով յուրաքանչյուր երկիր ունի ինովացիաների առանձնահատուկ համակարգը: Դրա հետ մեկտեղ, ինստիտուցիոնալ համակարգը համարվում է ազգային, այսինքն, ձևավորվում է ազգային պետության նպատակաուղղված քաղաքականության արդյունքում:

4. Հայաստանի գիտատեխնիկական ներուժի և առևտրային կազմակերպությունների ինովացիոն ակտիվության ցածր մակարդակը խիստ բացասաբար են ազդում տնտեսության տեխնոլոգիական զարգացման վրա: Հանրապետությունում առևտրային կազմակերպությունների կողմից ինովացիաների հանդեպ հետաքրքրու-

թյան պակասը պայմանավորված է անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ: Առևտրային կազմակերպությունների սեփական միջոցները բավականին սահմանափակ են, բյուջետային ներդրումները բավականին ցածր մակարդակի վրա են, ազգային բանկերի ներդրումային հնարավորությունները բավականին փոքր են:

5. Մտավոր սեփականության պաշտպանության` հանրապետությունում ձևավորված առկա վիճակը չի խթանում գյուտարարության և ինովացիաների զարգացումը: Հանրապետությունում ործատուներին և հետազոտական կենտրոններին վերապահված սեփականության իրավունքը սահմանափակում է անհատ հետազոտողների շահերը` կապված ինովացիայով պայմանավորված ակնկալիքների հետ:

Ինովացիոն գործունեության աջակցմանն ուղղված ՀՀ օրենսդրական դաշտը իրավական առումով բավականին կենսունակ է, եթե վերլուծությունը կատարում ենք առանձին օրենքների շրջանակներում, օրենքների համատեղման դեպքում ի հայտ են գալիս հետևյալ հիմնախնդիրները` օրենքի և իրականության միջև առկա անհամաձայնություն, թերի են նշված նպատակների իրականացմանը միտված հստակ սահմանված գործողությունները, ինչը օրենքին կամ իրավական այլ ակտին տալիս է դեկլարատիվ բնույթ, հստակ չեն երևում օրենսդրական քայլերի արդյունքում կազմակերպչական փոփոխությունները: Վերը նշված հիմնախնդիրների պատճառը կայանում է ՀՀ ինովացիոն տնտեսության ձևավորման մոդելի ոչ հստակ ներկայացման մեջ:

6. Հայաստանում ինովացիոն գործարարությանը խոչընդոտող հիմնական գործոններն են.

- սեփական դրամական միջոցների անբավարարությունը,
- պետության կողմից ֆինանսական ոչ բավարար աջակցությունը,
- նոր արտադրանքի նկատմամբ ցածր վճարունակ պահանջարկն ու տեխնոլոգիաների շուկայի գրեթե բացակայությունը,
- բարձր տնտեսական ռիսկը,
- ինովացիոն ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը,
- օրենսդրական և նորմատիվ փաստաթղթերի ոչ համակարգված լինելը,
- որակավորված անձնակազմի անբավարարությունը:

7. ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի քաղաքականություն, ուղղված վեճիչության համակարգի ձևավորման խթանմանը: Դրա իրականացման հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը,
- վեճիչության ներդրումների ներհուսքի խթանման համար օրենսդրական հենքի ստեղծումը,
- մասնավոր վեճիչության ներդրողների համար հարկային արտոնությունների տրամադրումը,
- երկարաժամկետ ռիսկային ներդրումների խթանման միջոցառումների իրականացումը,
- վեճիչության ներդրումների հիմնադրամի (հիմնադրամների հիմնադրամ) ստեղծումը,
- վեճիչության ներդրողների համար ռիսկի նվազեցումը,
- նոր տեխնոլոգիաներում ներդրումների իրականացմանը կողմնորոշված վեճիչության հիմնադրամների ստեղծման խթանումը,

- արժեթղթերի երկրորդային շուկայի զարգացումը,
- բարձր տեխնոլոգիաների մեկնարկային նախագծերի ստեղծման նախաձեռնությունների կենսագործումը:

8. Հայաստանի Հանրապետության համար ներկա փուլում կենսական է ինովացիաների ինտենսիվացումը, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է սեփական արտադրության զարգացման, կայուն եկամուտների ապահովման հենքի ստեղծման, այդպիսով նաև երկրի մրցունակության տեսանկյունից: Ինովացիաների խթանման համար պետության կողմից նպաստավոր պայմանների ապահովումը պետք է իրականացվի հետևյալ ուղիներով.

- ներդրումներ կրթության բնագավառում,
- աջակցություն գիտական հետազոտություններին,
- գիտահետազոտական հաստատությունների ստեղծում և աջակցություն,
- հետազոտություններում, ինովացիաներում ընկերությունների ներդրումների խրախուսում,
- գիտական հաստատությունների և գործարար հանրության միջև կապերի սերտացում,
- մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն,
- ինովացիաների առևտրայնացման համար փոխհատուցումների տրամադրում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Կարա-Պողոսյան Ա., Գիտական հետազոտությունների առևտրայնացման գործում պետական աջակցության համաշխարհային փորձը, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտ.հոդվ.ժող. 1(9), Երևանի «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2011, էջ 61-67:
2. Կարա-Պողոսյան Ա., Ինովացիոն տնտեսություն. գիտություն, պետություն, ձեռնարկատիրություն, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտ. հոդվ. ժող. 4(12), Երևանի «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2011, էջ 89-95:
3. Կարա-Պողոսյան Ա., Ինովացիոն տնտեսության զարգացման հիմքերը, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտ.հոդվ.ժող. 4(12), Երևանի «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2011, էջ 95-103:
4. Կարա-Պողոսյան Ա., Ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը անցումային տնտեսություններում, «Հայաստան. ֆինանսեր և էկոնոմիկա» հանդես, #6 (132), հունիս, 2012, էջ 2-6:
5. Կարա-Պողոսյան Ա., Ինովացիոն տնտեսության զարգացման կրթական բաղադրիչը ՀՀ-ում, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտ.հոդվ.ժող. 3(15) / Երևանի «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2012, էջ 93-98:
6. Կարա-Պողոսյան Ա., Հայաստանի ազգային ինովացիոն համակարգի կառավարման նախընտրելի մոդելը, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտ.հոդվ.ժող. 1(17), Երևանի «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2013, էջ 53-59:

## КАРА-ПОГОСЯН АРМЕН РОМАНОВИЧ

### “ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ИННОВАЦИОННОЙ СРЕДЫ В РА”

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-“Экономика, управление хозяйством и его отраслями”.  
Защита состоится 16-го июля 2013г., в 15<sup>00</sup> на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике действующего в Ереванском государственном университете по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

### РЕЗЮМЕ

В современных условиях управления бизнесом, когда интенсивный процесс интернационализации рынков существенно обострил конкуренцию и повысил требования потребителей, инновации стали определяющим фактором экономического развития. Инновации являются основой эластичности, а также жизнеспособности любой системы (экономической, управленческой и др.)

Не подлежит сомнению тот факт, что в Республике Армения в последние годы достигнуты высокие темпы экономического роста, но предполагать, что этот рост может служить основой для дальнейшего долгосрочного и стабильного развития, не кажется реальным, поскольку факторы, обеспечивающие достигнутый рост, не характерны для инновационного пути развития и в скором будущем будут исчерпаны. Кроме того, наша страна столкнется с серьезными экологическими проблемами и ресурсными ограничениями.

Следует отметить, что большая часть экономистов стран, исследующих перспективы развития экономик переходных и постпереходных периодов, убеждены, что без повышения инновационной активности национальной экономики, данные страны не смогут надеяться на долгосрочное и стабильное развитие.

Сказанное более чем характерно для Республики Армения, поскольку в группе стран с переходной и/или постпереходной экономикой она выделяется слабой обеспеченностью природными ресурсами и неблагоприятной региональной обстановкой. Поэтому с точки зрения долгосрочного экономического развития нашей страны важнейшей задачей является разработка и применение оптимальной модели национальной инновационной системы.

Сегодня в Армении стоит вопрос разработки единой стратегии формирования инновационной экономики, которая может интегрировать в едином контексте во все действующие и неначатые инициативы бизнес структур и государства, что будет способствовать повышению адресности и эффективного применения соответствующих мероприятий.

**Основной целью работы является:** выявить механизмы формирования национальной инновационной системы в Армении и указать более приемлемые пути экономической политики для эффективного функционирования этой системы.

Для достижения этой цели в настоящей работе выявлены и предложены решения

*следующих задач:*

- исследовать теоретические и практические основы инноваций и инновационной системы и на основе зарубежного опыта оценить роль инновационных систем в бизнес среде,
- оценить предпосылки построения национальной инновационной системы и инновационный потенциал Республики Армения, особенно уделяя внимание на научные и образовательные компоненты,
- исследовать текущее состояние инновационной конкурентоспособности экономики РА, а также институциональные и законодательные основы национальной инновационной политики,
- выявить основные препятствия в инновационном развитии экономики Республики Армения, представить предметные и фундаментальные механизмы по преодолению этих препятствий,
- оценить перспективы и приоритеты инновационного развития экономики, на основе которых будет возможным представить предпочтительную модель построения национальной инновационной системы Республики Армения.

В процессе исследования и анализа были получены следующие научные результаты, которые можно классифицировать как **научные новшества**.

- на основе исследования научных и образовательных компонентов оценены предпосылки построения национальной инновационной системы и инновационный потенциал, с помощью которых указаны также основные ресурсы, направленные на построение экономики знаний в Республике Армения,
- на основе исследования текущего состояния и динамики инновационной конкурентоспособности экономики РА выявлены институциональные и законодательные основы усовершенствования национальной инновационной политики,
- выявлены основные препятствия в инновационном развитии экономики Республики Армения и представлены предметные и фундаментальные механизмы по преодолению этих препятствий,
- оценены перспективы и приоритеты инновационного развития экономики, на основе которых представлена предпочтительная модель построения национальной инновационной системы Республики Армения.

Данное исследование является важным шагом для решения выявленных проблем в сфере инноваций в РА.

С практической точки зрения, исследование предлагает новые подходы и оценки для решения проблем в данной сфере и для повышения уровня эффективности управления.

**“INNOVATION ENVIRONMENT IMPROVING PROBLEMS IN THE RA”**

The Dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Doctor of Economics in the field of “Economics, Management of Economy and its Sectors” 08.00.02.

The Defense of the Dissertation will take place at 15<sup>00</sup>, on July 16, 2013, at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan St., Yerevan 0009, Armenia.

**SUMMARY**

In modern conditions of business management, when an intense process of internationalization of markets has increased competition and increased consumer demands, innovation has become the determining factor in economic development. Innovations are the basis of elasticity, as well as the viability of any system (economic, governance, etc.).

There is no doubt that in the Republic of Armenia in recent years achieved high rates of economic growth, but to assume that this increase may be the basis for further long-term and stable development, does not seem real, because the factors supporting the growth achieved are not typical for the innovative development and will soon be exhausted. In addition, our country will face seriously, environmental problems and resource constraints.

It should be noted that most of the economists who study the development prospects of the transition and post-transition periods, are convinced that without an increase in innovative activity of the national economy, these countries will not be able to expect a long-term and stable development.

The mentioned is more than is typical for the Republic of Armenia, as in the group of countries in transition and / or post-transition economies; it is allocated with poor natural resources and unfavorable regional environment. Therefore, from the point of view of long-term economic development of our country the most important task is the development and application of the optimal model of the national innovation system.

Today in Armenia raises a question of developing a single strategy for the formation of innovation economy, which can be integrated into a single context for all actual and unbegun initiative business structures and the state. This will help improve the efficiency and effectiveness of the relevant activities.

The main purpose of study is: to identify the mechanisms of the national innovation system in Armenia and provide more affordable ways of economic policy for the effective functioning of this system.

- To achieve this, in the present study identified and proposed the following objectives:
- To explore the theoretical and practical foundations of innovation and innovation system and on the basis of international experience on developing innovative systems to

- evaluate the role of innovation systems in the business environment;
- To assess the conditions of construction of national innovation system and the innovative potential of the Republic of Armenia, particularly paying attention to the research and educational components;
  - Examine the current state of innovation competitiveness of the economy of the RA, and the institutional and legal framework of the national innovation policy;
  - Identify the main obstacles to the innovative development of the economy of the Republic of Armenia, presenting a case and the fundamental mechanisms to overcome these obstacles;
  - Assess the perspectives and priorities of the innovative development of the economy, based on which it will be possible to present the preferred model for building a national innovation system in the Republic of Armenia.

In the process of research and analysis were obtained the following scientific results which may be classified as scientific innovation.

- Based on the study of scientific and educational components evaluated prerequisites for building a national innovation system and innovation potential, through which are indicated also key resources aimed at building a knowledge economy in the Republic of Armenia;
- Based on the study of the current status and trends in innovation competitiveness of economy of the RA, identified the institutional and legislative framework to improve the national innovation policy;
- Identified the main barriers to the development of the innovation economy in the Republic of Armenia and submitted the subject and the fundamental mechanisms to overcome these obstacles;
- Evaluated the prospects and priorities for innovative economic development, on the basis of which submitted a preferred model for building a national innovation system in the Republic of Armenia.

This study is an important step to address the problems found in the field of innovation in RA.

From a practical point of view, the study offers a new approach and evaluation to solve problems in this area and to improve the management efficiency.